

ԱՆԳԵԼԻՆԱ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի իրավաբանական վարչության հայցապահանջների և իրավական ակտերի բաժնի պետ, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՅԱՅՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ցանկացած երկրում ժողովրդավարության կարևոր ինստիտուտներից: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի առաջացման և դրա կայացման հիմնախնդիրները յուրահատուկ առանձնահատկություն են ձեռք բերում միջազգային հանրույթի կողմից չճանաչված այնպիսի հանրապետությունում, ինչպիսին ԼՂՀ-ն է, որը չնայած հայտնի իր բոլոր դժվարություններին, ունի ժողովրդավարական պետության իր բոլոր հատկանիշներն ու ատրիբուտները, այդ թվում նաև մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

ԼՂՀ-ի հակամարտությունը, հետպատերազմյան վիճակը և երկրում կատարված հասարակական-քաղաքական և տնտեսական փոփոխությունները տրամաբանորեն հանգեցրին նրան, որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը սահմանվեց որպես պետական քաղաքականության կարևորագույն ուղղություն: Նշված դրույթն իր ամրագրումը հետագայում ստացավ ԼՂՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում, համաձայն որի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք:

ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը նորամուծություն է ԼՂՀ պետական համակարգում և ներկայումս գտնվում է կայացման փուլում:

Հիմնարաներ- ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան, ԼՂՀ Սահմանադրություն, ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ, Փարիզյան սկզբունքներ, Օմբուդսմանների Միջազգային և Եվրոպական ինստիտուտներ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք»:

ԼՂՀ Սահմանադրություն, Հոդված 2

«Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է այդ իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

ԼՂՀ Սահմանադրություն, Հոդված 5

2005 թվականի փետրվարի 9-ին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքը: Սակայն, շուրջ երեք տարի Պաշտպան չէր

նշանակվում, ինչի գլխավոր պատճառն այն էր, որ օրենքը չէր սահմանել այդ պաշտոնի թեկնածուի առաջադրման համար կոնկրետ պատասխանատու մարմին՝ ամրագրելով, որ այդ իրավունքն ունի թե՛ Հանրապետության Նախագահը և թե՛ Ազգային ժողովի պատգամավորների կազմի 1/5-ը:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը նախատեսվեց նաև 2006 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված ԼՂՀ առաջին Սահմանադրությամբ, իսկ 2007 թվականի մայիսի 30-ին օրենքում կատարված փոփոխությամբ Պաշտպանի ընտրության մեխանիզմը կատարելագործվեց:

2008 թվականի ապրիլի 16-ին Ազգային ժողովն ընտրեց ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանին, իսկ մայիսին ձևավորվեց նրա աշխատակազմը: ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը գործում է մարդու իրավունքների խրախուսմամբ ու պաշտպանությամբ զբաղվող ազգային ինստիտուտների կարգավիճակին վերաբերող հիմնարար սկզբունքներին համապատաս-

www.journal.lawinsstitute.am

խան, որոնք հավանության են արժանացել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի՝ 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 48/134 բանաձևով (Փարիզյան սկզբունքներ):

Համաձայն այդ հիմնարար փաստաթղթի՝ Օմբուդսմանը *(այդպիսինն է Մարդու իրավունքների պաշտպանի անվանումը)* վստահության արժանի անկախ անձ է, որը պաշտամենտի կողմից լիազորված է պաշտպանելու քաղաքացիների իրավունքները և ընդարձակ հսկողության ձևով բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նկատմամբ վերահսկողություն է իրականացնում՝ առանց նրանց կողմից ընդունված որոշումների փոփոխության իրավունքի:

Վերը նշված փաստաթղթով սահմանված է նաև, որ իր լիազորությունների սահմաններում գործող Մարդու իրավունքների պաշտպանն անկախ է պետական իշխանության մարմիններից ու ենթակա չէ նրանց: Ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանը չպետք է զբաղվի որևէ քաղաքական գործունեությամբ, չի կարող լինել քաղաքական կուսակցության կամ քաղաքական նպատակներ հետապնդող այլ հասարակական միավորման անդամ:

Օմբուդսմանների Միջազգային և Եվրոպական ինստիտուտները, ինչպես նաև բոլոր այլ միջազգային կազմակերպությունները քաղաքականությամբ չզբաղվելը համարում են պետական իրավապաշտպան ինստիտուտների անկախ գործունեության կարևորագույն գրավակներ:

Օմբուդսմանի ինքնուրույնության էական երաշխիք է հանդիսանում նաև իր գործունեության ֆինանսական ապահովման հարցերում գործադիր իշխանությունից անկախության սկզբունքը: Օմբուդսմանի՝ առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ որևէ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին այն ներկայացվում է խորհրդարան:

Վերը նշված սկզբունքներն ամրագրված են նաև ԼՂՀ Սահմանադրությամբ ու «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենքով, և դրանց վրա է հիմնված Պաշտպանի գործունեության կազմակերպումն ու գործնականում իրականացումը:

ԼՂՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝ *«Ազգային ժողովը նշանակում է մարդու իրավունքների պաշտպանին»:*

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին»

ԼՂՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *«Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդով վեց տարի ժամետով Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդի կողմից առաջադրված թեկնածուներից»:*

Անդրադառնալով ԼՂՀ-ում Օմբուդսմանի ինստիտուտի ձևավորմանը՝ անհրաժեշտ է նշել ինստիտուտի գործունեության առաջին իսկ օրերից ինչպես ԼՂՀ Նախագահի, այնպես էլ օրենսդիր և գործադիր իշխանության մարմինների ակտիվ և շահագրգիռ մասնակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ֆունկցիոնալ և ինստիտուցիոնալ տեսանկյունից կայացման գործընթացին:

Երկրի ղեկավարի անմիջական նախաձեռնությամբ կատարվել են մի շարք քայլեր, որոնք ուղղված են եղել մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող պետական մյուս մարմինների համակարգում ինստիտուտի արագ ադապտացմանը և նրանց միջև անհրաժեշտ համագործակցության ծավալմանը:

2008 թվականի հունիս ամսից ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) աշխատակազմը ժամանակավորապես տեղակայված է եղել համեմատաբար հարմարավետ, վերանորոգված շինությունում, իսկ 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված է եղել սկսել նոր շենքի կառուցում: Իսկ արդեն 2012 թվականի գարնանից Պաշտպանի աշխատակազմը մի շարք գերատեսչությունների հետ միասին տեղափոխվել է նոր կառուցված հարմարավետ և ընդարձակ մի կառույց Շուշի քաղաքում:

ԼՂՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության առաջին իսկ օրերից իշխանության բոլոր թևերի հետ փոխհարաբերություններում ձևավորվել է բարյացակամ և փոխըմբռնման մթնոլորտ: Նշված մարմինները հիմնականում դրական մոտեցում էին ցուցաբերում Պաշտպանի կողմից իր լիազորությունների սահմաններում բարձրացված գրեթե բոլոր հարցերի նկատմամբ, որն իր հերթին դրական էր անդրադառնում մարդու իրավունքների ապահովման վրա:

Սակայն անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, որ ստեղծված փոխըմբռնման բարյացակամ մթնոլորտը, Պաշտպանի բարձրացրած հիմնախնդիրների այս կամ այն մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից թեկուզև ճիշտ, բայց ևայնպես սուբյեկտիվ ընկալումը մի շարք գերատեսչությունների ղեկավարների հետ Պաշտպանի ունեցած սերտ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գործընկերային հարաբերությունների հետևանք է, այլ ոչ թե հենց Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի՝ որպես անկախ ինստիտուտի ֆունկցիոնալ դերի ընթրոնման և ընդունման արտահայտում:

Ուսումնասիրելով այլ մարմինների հետ շփումները և քաղաքացիների դիմումների բնույթը՝ կարելի է ենթադրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը երկրում դեռևս անսովոր մարմին է ինչպես հանրության, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու նաև նրանց պաշտոնատար անձանց համար: Որոշ քաղաքացիներ և կազմակերպություններ այս ինստիտուտը հաճախակի ընդունում են մեկ որպես ամենակարող իշխանական ատյան, մեկ՝ հակառակը, որպես պետական մեքենայի զուտ ձևական ստրիբուտ: Սակայն, զարգացած ժողովրդավարության բազմաթիվ երկրների փորձը պարզ վկայում է այն մասին, որ պետական իրավապաշտպան ինստիտուտը ճիշտ կիրառելու դեպքում կարող է լինել բավականին արդյունավետ, ինչը կախված է քաղաքացիական հասարակության հասունության և ակտիվության աստիճանից:

Վերը նշվածից ենթադրվում է, որ նման պայմաններում ԼԳՀ Մարդու իրավունքների պաշտպանի գերխնդիրը երկրում՝ թե՛ իշխանական հատվածներում և թե՛ հասարակության շրջանում, Օմբուդսմանի ինստիտուտի՝ որպես անկախ, ինքնուրույն և նոր ինստիտուտի ընկալման մեջ է, որին էլ ուղղված է Պաշտպանի հետագա գործունեությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմը գործում են ԼԳՀ Սահմանադրության, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼԳՀ օրենքի և սույն ոլորտը կարգավորող միջազգային իրավական ակտերին համապատասխան: Ինչպես արդեն նշվեց, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼԳՀ օրենքն ընդունվել է 2005 թվականի փետրվարի 9-ին: Այն սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները և երաշխիքները:

Համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի՝ «Մարդու իրավունքների պաշտպանն անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով:

Պաշտպանը նպաստում է մարդու և քաղաքացու իրավունքների, դրանց պաշտպանության ձևերի ու մեթոդների մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանը և նրա համապատասխանեցմանը միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին, մարդու իրավունքի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը, մարդու իրավունքների և ազատության հարցերով իրավական դաստիարակությանը»:

Օրենքը, ի տարբերություն ՀՀ-ում գործող նույն օրենքի, Պաշտպանի ընտրության համար սահմանում է տարիքային այլ ցեմք, մասնավորապես՝ ԼԳՀ-ում մարդու իրավունքների պաշտպան կարող է նշանակվել 35 տարին լրացած ԼԳՀ այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն:

Օրենքը սահմանում է նաև Պաշտպանի նշանակման համար սահմանափակում՝ նույն անձն ավելի քան երկու անգամ անընդմեջ չի կարող նշանակվել Պաշտպանի պաշտոնում և Պաշտպանն իր պաշտոնը ստանձնում է նախորդ Պաշտպանի պաշտոնավարման ժամկետի ավարտման օրը: Եթե Պաշտպանի ընտրվելու պահին Պաշտպանի պաշտոնը թափուր է, ապա՝ իր ընտրության հաջորդ օրը:

Պաշտպանի հերթական ընտրություններն անցկացվում են Պաշտպանի լիազորությունների ավարտին նախորդող 40 օրվա ընթացքում:

ԼԳՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի կազմավորման առաջին իսկ օրերից մեծ ուշադրություն էր դարձվում ԼԳՀ Սահմանադրությամբ, Օրենքով, ինչպես նաև սույն ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով ամրագրված դրույթների և գործնականում դրանց՝ մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության իրականացման համապատասխանությանը:

Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պաշտպանը նպաստում է մարդու և քաղաքացու իրավունքների, դրանց պաշտպանության ձևերի ու մեթոդների մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության կատարելագործմանը և նրա համապատասխանեցմանը միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին, մարդու իրավունքի բնագավառում միջազգային համագործակցության զարգաց-

www.journal.lawinsstitute.am

մանը, մարդու իրավունքների և ազատության հարցերով իրավական դաստիարակությանը»:

Իրականացնելով Պաշտպանի գործունեության՝ Օրենքով սմրագրված կարևոր գործառույթը՝ Պաշտպանի աշխատակազմը պարբերաբար վերլուծում է մարդու իրավունքներն ու ազատությունները կարգավորող ԼՂՀ օրենսդրությունը՝ ստուգելով դրա համապատասխանությունը Սահմանադրությանը և միջազգային իրավունքի հանրնդհանուր ճանաչված սկզբունքներին և նորմերին, անհրաժեշտության դեպքում օրենսդիր և գործադիր իշխանությունների առջև հարուցելով օրենսդրության կատարելագործման հարցեր:

Ներկայումս ԼՂՀ-ն ապրում է սոցիալական և քաղաքաիրավական բարեփոխումների ժամանակաշրջան և նման պայմաններում ավելի է աճում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխիքների ամրապնդման անհրաժեշտությունը: Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ բողոքների և գանգատների լուծման գոյություն ունեցող մեխանիզմները բավարար չեն, բացի այդ, շատ քաղաքացիներ չեն դիմում իրավունքների պաշտպանության ավանդական միջոցներին (դատախազությանը, դատարաններին, գործադիր իշխանության մարմիններին բողոքարկմանը), քանի

որ դրանք պահանջում են շատ ժամանակ, ինչպես նաև ընթացակարգերը ձևականացված են ու դժվար, և նման պայմաններում շատ քաղաքացիներ առավել նախընտրում են նմանատիպ կառույցներին դիմելու տարբերակը:

Ընդհանրապես տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունից տեսնում ենք նաև, որ հասարակության մեջ կա յուրահատուկ վստահություն նշյալ ինստիտուտի նկատմամբ, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալով. հասարակության մեջ այն կարծիքն է տիրում, որ օմբուդսմանի ինստիտուտն այն կառույցն է, որը կարող է պետական իշխանության մարմիններից պահանջել անշահախնդիր ու անկողմնակալ վերաբերմունք նրանց նկատմամբ: Եվ սա է պատճառը, որ օմբուդսմանի ինստիտուտը պետք է կարողանա իր գործունեությամբ ապացուցել հասարակության մեջ բարձրակարգ ինստիտուտի իր կարգավիճակի փաստը:

Գործունեության նման ռազմավարություն է որդեգրել նաև ԼՂՀ-ի Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն:
2. ԼՂՀ Սահմանադրություն:
3. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք:
4. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ԼՂՀ օրենք:
5. «Մարդու իրավունքների պաշտպանության և հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիա:
6. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ 1993թ. դեկտեմբերի 20-ի թիվ 48/134 բանաձև (Փարիզյան սկզբունքներ):
7. Մարդու իրավունքների պաշտպանի ազգային հաստատություններ, Սահմանադրական և օրենսդրական ակտերի ժողովածու, Երևան, 2005թ.:
8. Альманах, Конституционное правосудие в новом тысячелетии.
9. Уполномоченные по правам человека (Омбудсмены) стран Европы и СНГ, Руководитель коллектива Миронов О.О. (Сборник нормативных правовых актов), Юриспруденция М, 200.
10. Лавировский А. П., Худяков А. А., Худяков А. И., О правовом статусе Уполномоченного по правам человека, Ученые записки, выпуск второй, СПб Институт права, 1999.

Անգелина Аванесян

Начальник отдела исков и правовых актов юридического управления аппарата управления по управлению государственным имуществом при правительстве Республики Армения, соискатель кафедры конституционного и муниципального права института политологии и права Российско-Армянского (Славянского) Университета

РЕЗЮМЕ

*Предпосылки возникновения и развития конституционных основ
Института Защитника прав человека НКР*

Институт Защитника прав человека НКР действует в республике с апреля 2008 года. Согласно Конституции НКР, защитник прав человека - независимое должностное лицо, которое осуществляет защиту нарушенных государственными органами, органами местного самоуправления и должностными лицами прав и свобод человека и гражданина.

Защитника прав человека НКР не менее чем тремя пятыми голосов от общего числа депутатов назначает Национальное собрание республики сроком на шесть лет. Одно и то же лицо не может назначаться защитником прав человека более чем два раза подряд.

Защитник прав человека несменяем. Он не может занимать должность в государственных органах, или в органах местного самоуправления, или в коммерческой организации, заниматься предпринимательской деятельностью, выполнять иную оплачиваемую работу, кроме научной, педагогической и творческой.

Омбудсмен не может быть членом какой-либо партии. Он наделен установленной для депутата неприкосновенностью.

Главной задачей Института является создание в карабахском обществе такой атмосферы, в которой «нарушение прав человека было бы попросту невозможно».

Ключевые слова: права человека, защитник прав человека НКР, Конституция НКР, омбудсмен, институт защитника прав человека НКР.

Angelina Avanesyan

Department of State Property Management by the Government
Of the RA as the Head of Division in Juridicial Department,
Post-graduate student of the
Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY

*The prerequisites of the emergence and the bases of constitutional development
of Human Rights Institute on the Republic of Nagorno Karabakh*

The institute of the NKR Human Rights Defender acts since April 17, 2008.

The institute of the Defender acts in correspondence with the fundamental principles (Paris principles) concerning the status of national institutes dealing with encouragement and protection of human rights which are also enshrined in the NKR Constitution and in the “Law on Human Rights”.

But the creation of the NKR Ombudsman Institute cannot be considered as a natural step that follows the suit of young democratic nations which actively assimilate traditions and experience of the early established democratic institutes in Western Europe.

It was quiet a difficult choice, for as different from many other countries for NKR’s situation it was necessary to find an exact fundamental answer to an important question: “whether it is necessary for a country which acts in conditions of permanent threat of war resumption and regime of military operations (hostilities) to create an ombudsman institute when the laws of the country being in such a regime, stipulates not the encouragement of human rights, but vice versa, they limit some of them, and if the answer is “yes”, whether it should completely or partially correspond to the classical rules and ideas of such an institute?”

Now we can surely state that the creation of this new state law enforcement body was one of the most important components of democratic reforms in NKR aimed at the improvement of state and formation of civil society.

It is also noteworthy that during about 20 years the action of the mentioned regime neither legislatively nor in other way, no human right was limited in the country stipulated in the Universal Declaration of Human Rights and in the NKR Constitution, as well as in other laws wholly taken.

Keywords: Human Rights Defender of NKR, Constitution of NKR, NKR Ombudsman Institute, Universal Declaration of Human Rights, NKR “Law on Human Rights”.